Սիմոնյան կրթական հիմնադրամ
Simonian educational foundation

Մասիս համայնքի ղեկավար
պարոն Դ.Համբարձումյանին

(հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս,
Կենտրոնական հրապարակ թիվ 4)

Հարգելի պարոն Համբարձումյան,

Սիմոնյան կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» բարեգործական ծրագիրը, որի շրջանակներում 12-ից 18 տարեկան երեխաներին տրամադրվում է անվճար ուսուցում՝ արվեստի և տեխնոլոգիաների 14 ոլորտներում: Այժմ Հիմնադրամը կենտրոններ ունի Երևանում, Դիլիջանում, Գյումրիում և Ստեփանակերտում՝ դրանց կից վեց Թումո տուփերով: Հայաստանից դուրս կենտրոններ կան Փարիզում, Բեյրութում, Մոսկվայում, Տիրանայում, Բեռլինում, Կիևում և Լիոնում: «Թումո Հայաստան» նախաձեռնության շրջանակներում նախատեսվում է առաջիկա տարիներին Հայաստանի մարզերի խոշոր քաղաքներում ունենալ տեխնոլոգիաներով հագեցած 16 Թումո կենտրոն, իսկ փոքր համայնքներում 110 Թումո տուփ:

Հիմնադրամը նպատակահարմար է համարում, համայնքապետարանի աջակցության դեպքում, Մասիս քաղաքում կառուցել Թումո կենտրոն: Մասնավորապես, քաղաքի բանուկ հատվածում Հիմնադրամին 0,7-ից 0,75 հա հողակտոր նվիրաբերելու պարագայում մենք պատրաստ ենք Թումո կենտրոնի կառուցման համար իրականացնել նվազագույն 400,000,000.00 ՀՀ դրամ արժողությամբ բարեգործական ծրագիր, որը թույլ կտա կենտրոնի ծառայություններից անվճար օգտվել շուրջ 2,300.00 աշակերտի, համայնքում ստեղծել նոր աշխատատեղեր, նպաստել համայնքի երիտասարդության շրջանում բարձր տեխնոլոգիաների նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը և տարածմանը:

Ակնկալում ենք Ձեր գործուն աջակցությունը:

Հարգանքով՝

Սիմոնյան կրթական հիմնադրամի
Զարգացման գծով Տնօրեն՝ Պեգոր Փափազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN SIMONYAN EDUCATIONAL FOUNDATION
ՀԻՄՆԱԴՐԱՄ
FOUNDATION
01245872

30/06/2022թ.

ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA, Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413